ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆԻ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔ ԲՐՅՈՒՍԵԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արշակ Քերոբյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Բելգիայի Թագավորություն (քաղաք Բրյուսել), 2023թ. նոյեմբերի 14-16-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպական Միություն (Նիստն անցկացվել է ԱԳԵԾ (Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն)-ում):

5. **Գործուղման նպատակը.**

2023թ. նոյեմբերի 15-ին Բրյուսելում կայացած ՀՀ-ԵՄ քաղաքական և անվտանգային հարցերով երկխոսության 2-րդ նիստին մասնակցելու նպատակով: Միջոցառումը նպատակ ուներ ընդգծել Հայաստանի և ԵՄ-ի փոխադարձ հետաքրքրությունը՝ ընդլայնել քաղաքական երկխոսությունը և համագործակցությունը արտաքին, անվտանգային և պաշտպանական քաղաքականության ոլորտներում, անդրադարձ կատարել ԵՄ անվտանգության և պաշտպանության քաղաքականության գործիքներին և դրանց գործնական կիրառումներին, հետագա քայլերին, քննարկել համատեղ լուծումների մշակման ուղղությամբ համագործակցության հնարավորությունները:

6. Քննարկված թեմաները.

Համաձայն օրակարգի՝ նիստերի ընթացքում քննարկվել են նաև ԵՄ-Հայաստան հարաբերությունները և հարաբերությունների ներկա վիճակը տարածաշրջանի երկրների հետ, ԵՄ-ի ներգրավվածությունը Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացում, մասնավորապես՝

- ԵՄ-ի ներգրավվածությունը և Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի ներկա վիճակը,
- ԵՄ-Հայաստան հարաբերությունները և հարաբերությունների վիճակը տարածաշրջանի երկրների հետ,
- թարմացում վերջին զարգացումների վերաբերյալ,
- անվտանգության մարտահրավերների ակնարկ,
- ԵՄ անվտանգության և պաշտպանության քաղաքականության գործիքներ և գործնական կիրառումներ,
- եզրակացություն և հետագա քայլեր:

Անդրադարձ է կատարվել ԵՄ անվտանգության և պաշտպանության քաղաքականության գործիքներին և դրանց գործնական կիրառումներին, հետագա համագործակցության հնարավորություններին:

7. Քննարկված հիմնական և կարևորագույն դրույթները.

Երկրորդ նիստը հաստատել է Հայաստանի և ԵՄ-ի փոխադարձ հետաքրքրությունը՝ ընդլայնելու քաղաքական երկխոսությունը և համագործակցությունը արտաքին, անվտանգային և պաշտպանական քաղաքականության ոլորտներում: ԵՄ-ն վերահաստատել է իր անվերապահ աջակցությունը Հայաստանի ինքնիշխանությանը, տարածքային

ամբողջականությանը և սահմանների անձեռնմխելիությանը և ողջունել ԵՄ հետ առավել սերտ համագործակցության Հայաստանի պատրաստակամությունը:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել եվրոպական անվտանգային ճարտարապետության ներկայիս մարտահրավերներին: Այս համատեքստում խստորեն ընդգծվել է ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման անընդունելիությունը:

Կողմերն ընդգծել են Հարավային Կովկասում տևական խաղաղության և կայունության հաստատման բացարձակ անհրաժեշտությունը:

Երկխոսության մասնակիցները քննարկել են նաև տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների վիճակը, ավելի լայն աշխարհաքաղաքական զարգացումները, ինչպես նաև հիբրիդային սպառնալիքներին և անվտանգության այլ մարտահրավերներին վերաբերող հարցեր: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել կիբեռսպառնալիքներին, որոնք գնալով առավել արդիական են դառնում:

Պայմանավորվածության համաձայն՝ Հայաստան-ԵՄ քաղաքական և անվտանգային հարցերով երկխոսության հաջորդ նիստը տեղի կունենա 2024թ.-ին Երևանում:

Նիստի ընթացքում «PowerPoint» սահիկաշարով ներկայացվել է անվտանգային ոլորտում սպառնալիքների հայկական կողմի ընկալումները, այդ թվում՝ կիբեռ և հիբրիդային անվտանգության ոլորտում, առկա խոցելիությունները, մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ Արշակ Քերոբյանի կողմից ներկայացվել են Հայաստանի տեսլականը կիբեռանվտանգության ոլորտի զարգացման վերաբերյալ, ոլորտի առաջընթացին ուղղված պետության կողմից իրականացվող քայլերը և մշակվող ծրագրերը:

8. **Գործուղման ընթացքում որպես չափելի արդյունքային ցուցանիշներ կարող ենք առանձնացնել հետևյալները.**

- Հայաստան-ԵՄ քաղաքական և անվտանգային հարցերով երկխոսության երկրորդ նիստը հնարավորություն է տվել ընդլայնել պատկերացումները ՀՀ-ԵՄ հարաբերությունների ընթացիկ վիճակի և ՀՀ եվրաինտեգրման հնարավորությունների մասին:
- Ապահովվել է գործընկերային շրջանակների թվի աճ, ինչը խթան կհանդիսանա համատեղ ծրագրերի կենսագործման և փորձի փոխանակման համար:
- Գործուղումը նպաստել է նաև թվայնացման ոլորտում օրակարգային թեմատիկ ուղղություններին համապատասխան գիտելիքների ծավալի ընդլայնմանը:
- Միջոցառման մասնակցությունը հնարավորություն է տվել կիբեռանվտանգային քաղաքականության տարածաշրջանային փոփոխությունները, մասնավորապես առկա սպառնալիքները հիմք ընդունելով՝ հստակ ու պարզորոշ վերլուծել ընթացիկ իրավիճակը՝ իրականացնելով վստահության ամրապնդման միջոցառումներ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Արշակ Քերոբյան

21.11.2023թ.